ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«16» օգոստոսի 2018թ. N 98

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 98-րդ հոդվածի առաջին մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով 13.08.2018 թվականին կայացած խորհրդակցության ժամանակ ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից տրված հանձնարարականը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքում արձանագրված մահվան դեպքի հետ կապված փաստական հանգամանքները պարզաբանելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա. Բեգլարյան) սահմանված կարգով իրականացնել ուսումնասիրություններ և արդյունքների մասին եռօրյա ժամկետում զեկուցել մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղեկալ Ա. Ղուկասյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 16.08.2018 14:13:44 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2018 թվականի օգոստոսի 16-ի
N 98 կարգադրության

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Բեգլարյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության գլխավոր մասնագետ

Անդամներ՝

Ա. Սարգսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Օ. Խաչատրյան	<<Հայաստանի Հանրապետության առողջապահության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ՊՈԱԿ >>Արմավիր մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՐ՝ Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ